ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ Պաշպանության նախարարությունը, որը գտնվում է ՀՀ ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է իր կարիքների համար հատուկ հանդերձանքի և տարբերանշանների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/46 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված N ԳՀԱՊՁԲ-7/46-1 պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2018 թվականի դեկտեմբերի 21-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ Սույն պայմանագրի կատարումը 9600000 (ինը միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքով կրծքանշանների մասով հնարավոր չի լինելու կատարել 2018թ. ընթացքում և հաջորդ բյուջետային տարվա ընթացքում պայմանագրի կատարման դեպքում ֆինանսավորման խնդիր չունենալու նպատակը:

Փոփոխության նկարագրություն՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N ԳՀԱՊՁԲ-7/46-1 գնման պայմանագրին կից վճարման ժամանակացույցում կատարել փոփոխություն՝ նախատեսելով 9600000 (ինը միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով կանխավճար: Կանխավճարի տրամադրումը լիազորված մարմնի կողմից սույն փոփոխությունը հաշվառվելուց հետո՝ 4 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 25.12.2018թ. ներառյալ: Կանխավճարի մարումն իրականացվում է մատակարարված ապրանքին համամասնորեն: Մատակարարման արդյունքում հաշվարկման ենթակա տույժերը Վաճառողը պարտավոր է վճարել ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին:

Փոփոխության հիմնավորում՝ 2018թ. հոկտեմբերի 19-ին կնքված N ԳՀԱՊՁԲ-7/46-1 գնման պայմանագրի 8.5 կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջները:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության բաժնի առաջատար մասնագետ Գ. Գևորգյանին:

Հեռախոս՝ 010-29-44-18
Էլ.փոստ՝ g.gevorgyan@mil.am:
Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ԳՀԱՊՁԲ-7/46-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 21-ը դեկտեմբերի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից և «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Լ. Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 19.10.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/46-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջները ՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Քանի որ սույն պայմանագրի կատարումը 9600000 (ինը միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքով կրծքանշանների մասով հնարավոր չի լինելու կատարել 2018թ. ընթացքում, ուստի Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N ԳՀԱՊՁԲ-7/46-1 գնման պայմանագրին կից վճարման ժամանակացույցում կատարել փոփոխություն՝ նախատեսելով 9600000 (ինը միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով կանխավճար՝ հաջորդ բյուջետային տարվա ընթացքում պայմանագրի կատարման դեպքում ֆինանսավորման խնդիր չունենալու նպատակով:

1.2 Կանխավճարի տրամադրումը լիազորված մարմնի կողմից սույն փոփոխությունը հաշվառվելուց հետո՝ 4 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 25.12.2018թ. ներառյալ: Կանխավճարի մարումն իրականացվում է մատակարարված ապրանքին համամասնորեն: Մատակարարման արդյունքում հաշվարկման ենթակա տույժերը Վաճառողը պարտավոր է վճարել ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքների հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն փոփոխությանը կից Հավելված N 1-ը հանդիսանում է փոփոխության անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Ավան. Քուչակ 16/2
ՀՀ ՖՆ աշխատանքների գործառնական վարչություն	«ԿոնվերսԲանկ» ՓԲԸ
հ/հ 900011144079	հ/հ 1930048861340100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00885285
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ